



Ժողովրդավարությունը քարքարոտ ճանապարհին
Հայաստանի 2008 թ–ի վիճարկված նախագահական
ընտրությունները, ետընտրական բռնությունները և միակողմանի
պատասխանատվության կանչելու քաղաքականությունը

Ամփոփում

2008 թվականի մարտի 1–ին ոստիկանության և ցուցարարների միջև բախումներ տեղի ունեցան՝ ավելի սրելով երկրում փետրվարյան նախագահական ընտրությունների արդյունքների վիճարկումը: Մարտի 1–ին՝ ընդամենը 20 ժամվա ընթացքում քաղաքի կենտրոնական տարբեր հատվածներում ոստիկանությունը առանց նախազգուշացնելու և դիմադրության հանդիպելու հարձակվեց ցուցարարների վրա, բանակցեց, հետ քաշվեց, վերադարձավ հարձակմանը, և ի վերջո թեժ մարտի մեջ մտավ ցուցարարների մի փոքր խմբի հետ: Ձուկվեց առնվազն տաս մարդ՝ ութ ցուցարար և ոստիկանության երկու ծառայող, իսկ շատերը վիրավորվեցին: Երևանում մարտիմեկյան իրադարձությունների ամբողջական պատկերը դեռ պետք է ի հայտ գա: Իրավապաշտպան մարմինների գործողությունները տարբեր վայրերում և օրվա տարբեր ժամանակահատվածներում հանգեցրին մահվան դեպքերի և վնասվածքների: Ոստիկանների և ցուցարարների միջև փոփոխվող դինամիկան նշանակում է, որ յուրաքանչյուր ոստիկանական գործողություն պետք է գնահատվի առանձին՝ պարզելու համար, թե արդյոք այդ գործողությունը դուրս չի եկել օրինականության շրջանակներից, որոնք սահմանված են ուժի և հրազենի կիրառման միջազգային ստանդարտներով: Մինչդեռ, բազմաթիվ հաղորդումներից պարզ է դառնում, որ տարբեր պահերի ոստիկանությունը կիրառել է ոչ համարժեք ուժ՝ ծեծի ենթարկելով ագրեսիվ պահվածք չունեցող ցուցարարների, և ոստիկանության կողմից հրազենի

օգտագործման որոշ դեպքեր թվում է՝ եղել են անհամաչափ և առանց թիրախի տարբերակման:

Այն փաստը, որ ոստիկանությունը ժամանակ առ ժամանակ նույնպես ենթարկվել է հարձակման չի արդարացնում նրանց կողմից ոչ համարժեք ուժի կիրառումը: Ինչպես նաև դա չի արդարացնում կալանավորների նկատմամբ վատ վերաբերմունքը և նրանց խոշտնագումների ենթարկելը, և դատական պատշաճ իրավական գործընթացի իրավունքների մերժումը, ինչպես օրինակ իրավաբան ընտրելու իրավունքը:

Ցուցարարները վիճարկում էին Հայաստանի փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների արդյունքները, որում իրենց թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանը պարտվել էր Մերժ Սարգսյանին: Մի խումբ ցուցարարներ, պնդելով, որ Սարգսյանի հաղթանակը ընտրակեղծիքների արդյունք է, ընտրություններից անմիջապես հետո նախաձեռնել էին շարունակական բողոքի ակցիաներ՝ ցերեկային հանրահավաքներ և գիշերային ճամբարում քաղաքի կենտրոնական հրապարակներից մեկում: Սկզբնական շրջանում իշխանությունները հանդուրժում էին ցուցարարներին: Մարտի 1-ի վաղ լուսաբացին, ոստիկանության կողմից ճամբարում իրականացված խուզարկությունը, որի համար որպես արդարացում նշվում է ցուցարարների շրջանում զենքի որոնումը, քաղաքի կենտրոնի այլ հատվածում ավելի մեծ ցույցի առաջացման պատճառ հանդիսացավ: Արդեն մինչև երեկո, երբ մայրաքաղաքի փողոցներում ավելի մեծ և բռնություններով զուգորդված հակամարտություն էր ծավալվում, պաշտոնից հեռացող նախագահ Ռոբերտ Քոչարյանը 20 օրյա արտակարգ դրություն հայտարարեց, որի ընթացքում արգելվում էին հանրային հավաքներն ու գործադուլները: Մարտի 1 –ի սկզբնական իրադարձություններում ոստիկանությունը խուզարկել, ցրել և քանդել է ցուցարարների վրանները՝ ծեծի ենթարկելով ցույցի մասնակիցներին, այդ թվում և նրանց, ովքեր մնացել էին քանդված վրանների տակ: Ցուցարարները կրկին խմբվեցին քաղաքի կենտրոնական մեկ այլ հատվածում, իսկ նրանց թիվն առավոտյան հետզհետե աճում էր. մասնակիցները սկսեցին բարիկադներ կառուցել և զինվել ինքնաշեն միջոցներով: Ոստիկանությունը բանակցել է ցույցի առաջնորդների հետ ցույցը մեկ այլ վայր տեղափոխելու վերաբերյալ, և հետ քաշվել՝ ցուցարարներին թույլ

տալով տեղաշարժվել, բայց հոժ ամբոխը հրաժարվում էր լքել տարածքը: Ցուցարարների և գործողությունների բեմահարթակից հեռացող ոստիկանության որոշ ծառայողների միջև բռնկվեց հակամարտություն, որի արդյունքում եղան ոստիկանական մեքենաների հրկիզումներ և հարձակումներ մոտակայքում գտնվող քաղաքապետարանի շենքը հսկող ոստիկանների վրա: Երեկոյան ներքին գորքերի ուժերը համալրում ստացան: Նրանք ցույցը ցրելու իրենց գործողությունները սկսեցին չափազանց ագրեսիվ միջոցներով՝ օգտագործելով լուսագծող գնդակի կրակոցներ և արցունքաբեր գազ: Ականատեսները պնդում են նաև, որ ոստիկանները ցրվելու բանավոր նախազգուշացումներ չեն տվել, ինչպես նաև, որ նրանք ոչ համարժեք ուժ են կիրառել նույնիսկ նրանց նկատմամբ, ովքեր ուժ չէին գործադրում ոստիկանների նկատմամբ: Ցուցարարները, որոնք զինվել էին մետաղե ձողերով ու մահակներով, սալահատակի քարերով, և նույնիսկ բենզինով լիցքավորված շիշ-նռնակներով ետ մղեցին ոստիկանների հարձակումը, որոնք հետ քաշվեցին դեպի մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող խաչմերուկը: Մինչ հիմնական ցույցը խաղաղ շարունակվում էր բարիկադների հետևում, ցուցարարների մի խումբ հարձակում սկսեց ոստիկանության վրա, որի արդյունքում էլ կարծես թե տեղի ունեցան մահվան դեպքերից մի քանիսը: Թեև, երբ ոստիկանությունը ուղիղ հարձակման էր ենթարկվում, որոշ կրակոցներ հնչել են, սակայն պարզվում է, որ ոստիկանները նույնպես կրակել են ցուցարարների վրա միտումնավոր և առանց թիրախի տարբերակման այնպիսի հանգամանքներում, երբ փաստեր չկան, որ հիմնավորված էր մահաբեր զենքի օգտագործումը:

Բռնությունների արդյունքում իրականացվել են հարյուրից ավելի ձերբակալություններ: “Human Rights Watch” -ը գրուցել է մարդկանց հետ, որոնց ձերբակալության ընթացքում ծեծի էին ենթարկել, իսկ ոստիկանությունում կալանքի ժամանակ հարվածել են, անպատվել ու սպառնացել: Ոտնահարվել էր մեր գրուցակից կալանավորների՝ իրենց գտնվելու վայրի մասին հարազատներին տեղեկացնելու իրավունքը, ինչպես նաև մերժել էին իրենց ընտրությամբ իրավաբանի օգնություն ստանալու իրավունքը:

Մարտիմեկյան իրադարձություններին Հայաստանի իշխանությունները միակողմանի արձագանքեցին: Այն դեպքում, երբ հետաքննել, դատապարտել և երբեմն թերացումներով ընթացող և քաղաքական դրդապատճառներով պայմանավորված դատավարություններում մեղավոր են ճանաչել ընդդիմության տասնյակ անդամների ցույցը կազմակերպելու և բռնի անկարգություններին մասնակցելու համար, նրանք իշխանության ներկայացուցիչներից ոչ մեկին մեղադրանք չեն ներկայացրել ոչ համարժեք ուժի կիրառման համար: Գլխավոր դատախազությունը հերքել է կալանքի ժամանակ վատ վերաբերմունքի և խոշտանգումների մասին պնդումները՝ դրանք համարելով անհիմն:

Հայաստանում ընտրական քաղաքականությունը անկախությունից ի վեր շարունակում է մնալ անհավասար մրցակցության, կեղծումների, և վեճերի շրջանում, որը դեպքերի մեծ մասում դուրս է եկել փողոց: Ընտրությունների կազմակերպման գործընթացի նկատմամբ հանրային վստահություն ծացր է, իսկ արդյունքներն ընկալվում են ցինիզմով: Հայաստանի բազմակուսակցական համակարգի գործունեության և իրական քաղաքական պայքարի համար խոչընդոտ են հանդիսանում կուսակցությունների կայունանալու և համախմբվելու բազմաթիվ անհաջող փորձերը: Իրական քաղաքական մրցակցությունը, այնքանով, որքանով վերջինս գոյություն ունի, անկայուն է՝ բռնության մշտական սպառնալիքով, մինչդեռ ընտրական պայքարի մասնակիցների, հատկապես հաղթողների և պարտվողների միջև փոխադարձ հարգանքը, ծայրահեղ նվազ է: Հայաստանի Գլխավոր դատախազությունը պետք է ավելի մեծ ջանք գործադրի անկախ և անաչառ հետաքննություն իրականացնելու համար՝ պարզելու, թե արդյոք իրավապահ մարմինների ծառայողները գործել են ամբոխի վերահսկման և ուժի կիրառման վերաբերյալ ազգային և միջազգային օրենքների սահմաններում: Այս հետաքննությունը պիտի անդրադառնա նաև մարտի 1-ի դեպքերի մասնակցության հետ կապված կալանավորված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի պնդումներին՝ գնահատելով, թե արդյոք խախտվել է խոշտանգումների, վատ վերաբերմունքի և կամայական կալանքի դեմ միջազգային և եվրոպական չափանիշները, որոնց միացել է նաև Հայաստանը:

Ավելի լայն առումով, անհրաժեշտ է անդրադառնալ Հայաստանի ընտրական գործընթացների թերություններին և կեղծումներին, որոնք նպաստում են արդարության նկատմամբ անվստահության և արդյունքների վերաբերյալ կասկածների տարածմանը: Հայաստանի իշխանությունները և միջազգային գործընկերները, որոնք անհանգստացած են Հայաստանում ժողովրդավարության կայացմամբ, պետք է անդրադառնան լայնորեն տարածված հանրային անվստահության և՛ պատճառներին, և՛ ախտանիշներին, որի արդյունքում Հայաստանում երբևէ կարելի է հասնել իսկական ժողովրդավարության:

VII. Առաջարկություններ

Հայաստանի կառավարությանը

Ցուցարարներին ցրելու և նրանց վրա հարձակումների վերաբերյալ

Գլխավոր դատախազությունը պետք է Մարտի 1-ին Ազատության հրապարակում ցուցարարներին ցրելու և Մյասնիկյանի արձանի շրջակայքում ցուցարարների դեմ վարած ոստիկանական գործողությունների վերաբերյալ համապարփակ և անկախ հետաքննություն իրականացնի: Հետաքննությունը պետք է՝

- հատուկ ուշադրություն դարձնի իրավապահ մարմինների ծառայողների կողմից ցուցարարների նկատմամբ հարձակումների և ոչ համարժեք ուժ՝ ներառյալ մահացու, կիրառելու վերաբերյալ պնդումներին:
- կիրառի բոլոր առկա վիդեո և ֆոտո ապացույցները, ինչպես նաև վկաների ցուցմունքները
- Որոշի՝ արդյոք ուժի և հրազենի կիրառումը համապատասխանել է պետական օրենքներին և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային օրենքներին ու չափանիշներին՝ ներառյալ իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնական սկզբունքները:
- ուսումնասիրի մարտեր վարելու կանոնները՝ ներառյալ նախապես իրականացրած ռիսկերի գնահատումը, ներգրավված իրավապահ բաժանմունքներին տրված հրամանները, ինչպես նաև նրանց տրամադրության տակ գտնվող սարքավորումներն, այդ թվում և հրազենը:
- Մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկի ոչ համարժեք ուժի կիրառման ոչ միայն անհատական պատասխանատվության դեպքերը, այլև այն հրամանատար անձանց պատասխանատվությունը, ում կողմից վերահսկված գործողությունները համարվել են ոչ համաչափ:
- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային համապատասխան՝ հետաքննությունը պետք է բաց լինի հանրային վերահսկողության,

ինչպես նաև տուժածների և նրանց ընտանիքների մասնակցության համար: Բացի այդ, հետաքննությունը պետք է կարողանա գործերի ընթացքը հասցնել դատարան, որի առջև կկանգնեն բոլոր այն անձինք, ովքեր համարվել են պատասխանատու 3-րդ հոդվածի խախտմամբ վնասվածքներ պատճառելու համար:

- ՀՀ Ոստիկանությունը անհապաղ պետք է իրականացնի մարտի 1-ին հնարավոր հանցանքի համար հետաքննության մեջ ընդգրկված իրավապահ ցանկացած ծառայողի ակտիվ պարտականությունների առկախումբ:
- Այնտեղ, որտեղ ապացույցներ կան, որ իրավապահ մարմինների որևէ ներկայացուցիչ մարտի 1-ին պատասխանատու է որևէ հանցանքի համար, նրանք անհապաղ պետք է հետապնդվեն դատական կարգով և արդար դատավարությամբ:
- Ոստիկանությունը պետք է իրականացնի հիմնավոր ներքին հետաքննություն մարտի 1-ին ցուցարարներին ցրելու գործողությունների վերաբերյալ: Այս հետաքննությունը պետք է ձգտի որոշել, թե արդյոք իրավապահ մարմինները գործել են ուժի կիրառման վերաբերյալ միջազգային և հայաստանյան օրենսդրության ու կարգերի համաձայն: Հետաքննության արդյունքները պետք է հրապարակվեն:
- Մարտի 1-ին իրավապահների գործողությունների թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովելու համար, ոստիկանությունը պետք է անհապաղ հրապարակի Ազատության հրապարակում ցուցարարներին ցրելու և Մյասնիկյանի արձանի շրջակայքում ցուցարարներին ցրել փորձող գործողությունների մասնակից ուժերի ճշգրիտ կազմը:
- Կառավարությունը անհապաղ պետք է ձեռնարկի այնպիսի մի օրենսդրության ընդունում, որով կսահմանվի բոլոր իրավապահ մարմինների, այդ թվում ներքին գործերի և հատուկ ուժերի անդամների տարբերիչ նշաններ կրելը և բոլոր իրավապահ մարմիններին համապատասխան տարբերիչ նշան պարունակող համազգեստ տրամադրի:

- Կառավարությունը պետք է վերանայի ոստիկանության գործողություններին և ամբոխի կառավարմանը վերաբերող օրենսդրությունը և երաշխավորի, որ ուժի կիրառման վերաբերյալ օրենքները ամբողջովին համապատասխանեն Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ICCPR), Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ECHR) և ՄԱԿ-ի՝ իրավապահ մարմինների կողմից հրազենի և ուժի կիրառման վերաբերյալ հիմնարար սկզբունքների հետ:
- Կառավարությունը և ոստիկանությունը պետք է հանրությանը ներկայացնեն մարտի 1-ին ծառայողական պարտականությունները իրականացնող ուժերի ամբոխի կառավարման վերաբերյալ ստացած դասընթացները: Նրանք պետք է վերանայեն բոլոր նման դասընթացներն այնպես, որ նրանցում ամբողջովին ներառվեն մարդու իրավունքների սկզբունքները և պարտավորությունները: Այս նպատակի իրականացման համար, կառավարությունը և ներքին գործերի նախարարությունը պետք է նախատեսեն միջազգային և հայաստանյան փորձագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ միասին ուժի կիրառման վերաբերյալ ուսումնական ձեռնարկի մշակումը, որը կներառի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ICCPR), Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի (ECHR) և ՄԱԿ-ի՝ իրավապահ ծառայողների կողմից հրազենի և ուժի կիրառման վերաբերյալ հիմնարար սկզբունքները:

Ձերբակալման և կալանքի տակ պահելու ժամանակ մարդկանց նկատմամբ վերաբերմունքի մասին

- Դատախազությունը պետք է իրականացնի ձերբակալության և կալանքի տակ պահելու ժամանակ ոստիկանության ծառայողների կողմից վատ վերաբերմունքի կիրառումների վերաբերյալ պնդումների ամբողջական, անկախ և թափանցիկ հետաքննություն: Հետաքննությունը պետք է բերի մեղավորների բացահայտմանը և դատապարտմանը:

- Հետաքննության իրականացման ընթացքում, ոստիկանության ղեկավարները պետք է երաշխավորեն, որ ոստիկանության ծառայողների նկատմամբ, որոնց դեմ պնդումներ կան, որ վատ վերաբերմունք են ցուցաբերել ցուցարարների ձերբակալության և կալանքի տակ պահելու ժամանակ, կիրառվի ակտիվ պարտականությունների առկախում:
- Անհրաժեշտ է, որ իշխանությունները ընդունեն օրենսդրական փոփոխություններ, որով տրամադրվի սեփական ընտրությամբ իրավաբան ունենալու իրավունքի անխոչընդոտ իրականացման հնարավորություններ ձերբակալության պահից իսկ սկսած:
- Հայաստանը ստորագրել է Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը (OPCAT) 2006 թ.-ին: Ըստ OPCAT –ի Հայաստանը պետք է հզորացնի մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ որպես անկախ ազգային մարմին, որն իրականացնի կանոնավոր և ըստ անհրաժեշտության նախապես չճանուցված այցեր բոլոր կալանավայրեր:

Ընտրությունների անցկացման վերաբերյալ

- Շարունակել ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ), ինչպես նաև այլ եվրոպական հաստատությունների հետ համագործակցությունը ընտրական գործընթացների բարելավման ուղղությամբ: Հետևել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Հայաստանի ընտրությունների վերաբերյալ զեկույցներում, այդ թվում և 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցի համապատասխան և դեռ չիրականացրած առաջարկություններին: Նշված զեկույցում կոչ է արվում պետական և ընտրությունների իրականացման համար իրավասու մարմիններին լրջորեն անդրադառնալ ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության ակնհայտ բացակայությանը:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովին

Շարունակել ԵՆԽՎ 1609 (2008) բանաձևի իրականացման մոնիթորինգը և շտապեցնել Հայաստանի իշխանություններին երաշխավորել մարտի 1-ի և 2-ի դեպքերի անկախ, ամբողջական, անկողմնակալ և վստահելի, ինչպես նաև դեպքերից հետո պատշաճ դատական գործընթացի խախտումների՝ ներառյալ վատ վերաբերմունքի վերաբերյալ հետաքննության իրականացումը:

ԱՄՆ-ին և Եվրոպական Միությանը

ԱՄՆ-ը և ԵՄ-ը Հայաստանի իշխանությունների համար պետք է հստակորեն պարզ դարձնեն, որ Հայաստանի հետ իրենց հարաբերությունները ուղղակիորեն կախված են այն բանի հետ, թե Հայաստանը որքանով կցուցաբերի իր անկեղծ նվիրվածությունը օրենքի գերակայությանը, մարդու իրավունքներին և դրանց խախտման համար պատասխանատվության ենթարկելու գործընթացին, ինչպես նաև ազատ և արդար ընտրություններին՝ այդ թվում իրականացնելով հետևյալ որոշակի քայլերը:

- Մարտի 1-ին իրավապահ մարմինների ներկայացուցիչների գործողությունների ամբողջական հետաքննություն,
- Երաշխավորել, որ իրավապահ մարմինների բոլոր ներկայացուցիչները ստանան ուժի կիրառման և դրա սահմանափակումների վերաբերյալ գործնական գիտելիքներ՝ մարդու իրավունքների սկզբունքներին համապատասխան:
- Ամբողջությամբ ստանձնել ընտրությունների միջազգային դիտորդական մարմինների կողմից արված առաջարկությունների իրականացումը, հատկապես այն առաջարկությունների, որոնք ներառված են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2008թ. փետրվարի 19-ի ընտրությունների վերջնական զեկույցում, որտեղ կոչ է արվում պետությանը և ընտրությունների իրականացման համար պատասխանատու մարմիններին լրջորեն զբաղվել ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության ակնհայտ բացակայության խնդրով.